«Կայուն զարգացման նախաձեռնությունների «Աստղացոլք» հասարակական կազմակերպություն

«ՀԻՄԱ՝ հանրային միջոցները հանուն երեխաների իրավունքների պաշտպանության» Ծրագիր

Քաղաքացիական հասարակության կառույցներին պետական ֆինանսական աջակցության (Մարզպետարանների և համայնքների բյուջեներից) տրամադրման գործընթացի առկա վիճակը և հիմնախնդիրները

Սույն զեկույցը մշակվել է Կայուն զարգացման նախաձեռնությունների «Աստղացոլք» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «ՀԻՄԱ՝ հանրային միջոցները՝հանուն երեխաների իրավունքների պաշտպանության հաշմանդամության իրավական մոդելի առաջխաղացում» ծրագրի շրջանակներում:

Սույն ծրագիրն իրականացվում է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում:

«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական Միության կողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն Կայուն զարգացման նախաձեռնությունների «Աստղացոլք» ՀԿ-ն
և այն որևէ կերպ չի արտահայտումԵվրոպական միության պաշտոնական տեսակետները:

Երևան 2019թ.

Բովանդակություն

Հապավումների ցանկ

Ներածություն

Հասկացությունների սահմանում

Հետազոտության նպատակը և խնդիրները

Մեթոդաբանություն

Հիմնական բացահայտումներ

- 1.ՔՀԿ-ներին տրամադրվող պետական ֆինանսական աջակցության ծավալը
- 2.ՔՀԿ-ների ֆինանսավորումը պետական կառույցների ֆինանսավորման հոդվածներով
- 3.ՔՀԿ-ներին պետական ֆինանսական աջակցության տրամադրման ընթացակարգը
- 4. Ֆինանսական միջոցների վերահսկում և կատարողականի մշտադիտարկում
- 5.Մարզպետարանների և համայնքապետարանների բյուջեներից ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ հոդվածից ծախսվող ֆինանսական միջոցների ծավալը
- 6. Համայնքապետարանների բյուջեներից ԱՅԼ ԾԱԽՍԵՐ հոդվածից ծախսվող ֆինանսական միջոցների ծավալը
- 7. Մարզպետարանների և համայնքապետարանների բյուջեներից ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ բաժնի, ԱՅԼ ՆՊԱՍՏՆԵՐ ԲՅՈՒՋԵԻՑ հոդվածից ծախսվող ֆինանսական միջոցների ծավալը

Եզրակացություններ

Առաջարկություններ**Ошибка! Закладка не определена.**

Հավելվածներ

Հապավումների ցանկ

ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կառույց
ՀԿ	Հասարակական կազմակերպություն

Ներածություն

Կայուն զարգացման նախաձեռնությունների «Աստղացոլք» հասարակական կազմակերպությունը իրականացնում է մի նոր նախաձեռնություն, որը հանրային քաղաքականությունների մոնիթորինգի, բարելավման և այդ գործընթացներում հանրային մասնակցության ապահովման և հանրային ազդեցության մեծացման նպատակով ուսումնասիրություն և վերլուծություն է կատարել թվով 3 (երեք) մարզպետարանների (Լոռու, Տավուշի և Գեղարքունիք) և թվով 6 (վեց) համայնքապետարանների (Ստեփանավան, Տաշիր, Դիլիջան, Իջևան, Վարդենիս և Ճամբարակ) բյուջեների ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման արդյունքում:

Կայուն զարգացման նախաձեռնությունների «Աստղացոլք» հասարակական կազմակերպության նախաձեռնության, մոնիթորինգի նպատակն է բարձրացնել մարզպետարանների և համայնքների բյուջեներից քաղաքացիական հասարակության կառույցներին (ՔՀԿ), մասնավորապես երեխաների պաշտպանության ոլորտում գործող ՀԿ-ներին և հիմնադրամներին տրամադրվող ֆինանսական հատկացումների գործընթացի թափանցիկությունն ու հանրային հաշվետվողականությունը՝ մեխանիզմների մշակման և կիրառման միջոցով:

Մոնիթորինգը մի գործընթաց է, որը ներառում է համայնքի կողմից տարբեր ոլորտներում ծախսվող գումարների նպատակայնության և արդյունքների ուսումնասիրությունը:

Մոնիթորինգը ուղղված է ապահովելու համայնքային ծրագրերի իրականացման թափանցիկությունը, բացահայտելու հանրային ծրագրերի իրականացման անհամապատասխանությունները: Բացի վերոնշյալից, մոնիթորինգը հակված է ստանալու հետևյալ արդյունքները՝ հավաքագրել ապացույցների վրա հիմնված, ճշգրիտ և անկողմնակալ ընկալվող տեղեկատվություն.

- *Զևավորել իրազեկվածություն շահառուների և տեղական ծառայություններ մատուցողների շրջանում:*
- *Բարելավել կառավարման մարմինների փաստաթղթերի և տեղեկատվության մատչելիությունը քաղաքացիների համար:*
- *Հզորացնել կառավարման մարմինների վարքագծի վրա քաղաքացիների ներգործելու կարողությունները:*

Մարզպետարանները և համայնքապետարանները յուրաքանչյուր տարի ֆինանսական աջակցություն են տրամադրում քաղաքացիներին՝ ԸՆՏԱՆԵԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ԵՒ ՀՐԱՏԱՊ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ տեսքով:

Տարածքային կառավարման մարմիններին (մարզպետարաններին) և տեղական ինքնակառավարման մարմիններին (ՏԻՄ), համապատասխանաբար յուրաքանչյուր տարի պետական բյուջեի մասին օրենքով սահմանվում է հատկացվելիք ֆինանսական աջակցության չափը:

Մարզպետարաններն ու համայնքապետարններն էլ իրենց հերթին համաֆինանսավորման և ֆինանսավորման տարբեր ծրագրեր են իրականացնում միջազգային և տեղական կազմակերպությունների հետ, ինչպես նաև ֆինանսական աջակցություն են տրամադրում համայնքի բնակիչներին, սակայն այդ աջակցությունը տեսանելի չէ հանրության համար: **Մարզպետարանների և համայնքապետարնների կայքերում չկան համապատասխան պարզ և մատչելի տեղեկատվություններ բյուջեների մասին և կատարողական հաշվետվությունների մասին, կամ կա տեղեկատվություն, բայց կայքի ոչ սահմանված հատվածում, այն էլ ոչ ամբողջական և/կամ ոչ համապատասխան ձևաչափի: Թերևս, բացառություն է կազմում Լոռու մարզպետարանը, որը http://lori.mtad.am/ կայքի միջոցով և Վարդենիսի համայնքապետարանը, http://vardenis.am կայքի միջոցով ապահովում են գործընթացների թափանցիկությունը:**

Կայուն զարգացման նախաձեռնությունների «Աստղացոլք» ՀԿ-ի կողմից 2019 թվականին կատարվել է ՀՀ 2018թ. թվով 3 (երեք) մարզպետարանների և թվով 6 (վեց) համայնքապետարանների բյուջեների տվյալների համեմատական վերլուծություն և բացահայտվել են բյուջետային միջոցները ՔՀԿ-ներին հատկացնելու դրսևորումներ, որի համար ներկայացվում են համապատասխան առաջարկություններ:

Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեից, թվով 3 (երեք) մարզպետարանների և թվով 6 (վեց) համայնքապետարանների միջոցով ՔՀԿ-ներն ստացել են ավելի քան **9.711.900** դրամի ֆինանսավորում:

Այժմ Հայաստանում չի գործում հստակ մեխանիզմ, ինչը անհրաժեշտություն է առաջացնում պարբերաբար հավաքագրել և վերլուծել տեղեկություններ այդ գործընթացի բոլոր դրսևորումների վերաբերյալ: Այդ նպատակով Կայուն զարգացման նախաձեռնությունների «Աստղացոլք» ՀԿ իրականացնում է հետազոտություն պարզելու նպատակով, թե որոնք են հանրային (պետական և համայնքային) ֆինանսական աջակցության տրամադրման մեխանիզմները:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Հետազոտության **նպատակն** է բացահայտել ՔՀԿ-ներին տրամադրվող պետական ֆինանսական օժանդակության ծավալը և բարձրացնել հասարակության իրազեկությունը 3 մարզային և 6 տեղական իշխանությունների բյուջեների մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ:

Հետազոտության **խնդիրներն** են պարզել՝

1. կյանքի դժվարին պայմաններում հայտնված կամ հաշմանդամություն ունեցող երեխաների պաշտպանությանն ուղղված ծրագրերին պետական ֆինանսական աջակցության չափը,
2. պետական ֆինանսական աջակցության տրամադրման հիմնական ոլորտները և ուղղությունները:

Մեթոդաբանություն

Հետազոտության նպատակի և խնդիրների իրականացման համար օգտագործվել է տվյալների հավաքագրման հետևյալ մեթոդները.

- **Փաստաթղթերի վերլուծություն**

Ուսումնասիրվել են ՀՀ Լոռու, Տավուշի և Գեղարքունիքի մարզպետարանների և մասնավորապես Ճամբարակ, Վարդենիս, Սեփանավան, Տաշիր, Դիլիջան և Իջևան համայնքների բյուջեները, համապատասխան բյուջեներից տրամադրվող ֆինանսական հատկացման տողերը, բյուջեի կատարման փաստաթղթերը: Որպես տեղեկատվության աղբյուր են ծառայել, մասնավորապես, http://mtad.am կայքը և մարզպետարաններից ու համայնքներից ստացած գրությունները՝ 2018թ. կյանքի դժվարին պայմաններում հայտնված կամ հաշմանդամություն ունեցող երեխաների պաշտպանությանն ուղղված ծրագրերի և տրամադրված ֆինանսավորման վերաբերյալ:

- **Խորին հարցազրույց**

Իրականացվել է **4** խորին հարցազրույց ՔՀԿ-ների ներկայացուցիչների հետ, որոնք ընտրվել են պետական ֆինանսավորում ստացած ՔՀԿ-ների ցուցակներից՝ ըստ ստացած ֆինանսական միջոցների չափի:

- **Փորձագիտական հարցազրույց**

Իրականացվել է **2** հարցազրույց մարզպետարանների ներկայացուցիչների հետ:

Ստացված տվյալները անցել են թվային և բովանդակային վերլուծություն՝ ըստ սահմանված հետազոտական խնդիրների:

Հիմնական բացահայտումներ

1. ՔՀԿ-ներին տրամադրվող պետական ֆինանսական աջակցության ծավալը

Հայաստանի Հանրապետության տարբեր մարզպետարաններ և համայնքապետարաններ ֆինանսավորել են ՔՀԿ-ների գործունեությունը կամ միջոցներ են հատկացրել վերջիններիս կողմից կյանքի դժվարին պայմաններում հայտնված կամ հաշմանդամություն ունեցող երեխաների պաշտպանությանն ուղղված ծրագրերի իրականացմանն օժանդակելու նպատակով:

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին թվով 3 (երեք) մարզպետարաններից և թվով 6 (վեց) համայնքապետարաններից ֆինանսավորում ստացած ՔՀԿ-ների անունները և ֆինանսավորման ծավալները ներկայացված են Աղյուսակ 1-ում, 1.1-ում և 2-ում:

Աղյուսակ 1-ում ներկայացված են տարբեր մարզպետարանների, իսկ Աղյուսակ 1,1-ում ներկայացված են տարբեր համայնքապետարանների կողմից ֆինանսավորում ստացած կազմակերպությունների քանակը: Աղյուսակ 2-ում ներկայացված են Տարբեր մարզպետարաններից և համայնքապետարաններից ֆինանսավորում ստացած Երեխաների պաշտպանության ոլորտում գործող ՔՀԿ-ների օրինակներ և ֆինանսավորման ծավալները:

Աղյուսակ 1. Դիտարկված մարզպետարանների կողմից ֆինանսավորում ստացած կազմակերպությունների քանակը

	Մարզպետարան	**ՀԿ**
1	Լոռի	5
2	Տավուշ	2
3	Գեղարքունիք	0

Աղյուսակ 1.1 Դիտարկված համայնքապետարանների կողմից ֆինանսավորում ստացած կազմակերպությունների քանակը

	Համայնքապետարան	**ՀԿ**
1	Տաշիր	3
2	Ստեփանավան	0
3	Դիլիջան	1
4	Իջևան	3
5	Ճամբարակ	0
6	Վարդենիս	1

Աղյուսակ 2. Դիտարկված մարզպետարաններից և համայնքապետարաններից ֆինանսավորում ստացած Երեխաների պաշտպանության ոլորտում գործող ՔՀԿ-ների օրինակներ և ֆինանսավորման ծավալները

N	ՔՀԿ-ներ (ՀԿ-ներ և Հիմնադրամներ)	ՀՀ Դրամ
1	**«Բայրամյան» ՍԲՀԿ –** Տավուշի մարզպետարան	3,215,800
2	**«Քմյունիթի սենթր ֆոր դիվելոփմենթ» տարածաշրջանային համագործակցություն ՀԿ -** Տավուշի մարզպետարան -2017թ.	3,442,100
3	**«Հավասար իրավունքներ հավասար պարտականություններ» ՀԿ** - Լոռու մարզպետարան	80,000
4	**«Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամ -** Լոռու մարզպետարան	150,000
5	**«ԷԴԱՍ» ՀԿ -** Լոռու մարզպետարան	40,000
6	**«Օրրան» ԲՀԿ -** Լոռու մարզպետարան	144,000
7	**Վետերանների խորհուրդ -** Լոռու մարզպետարան	210,000
8	**«Աստղավարդ» հաշմանդամ երեխաների ծնողների հասարակական կազմակերպություն** – Վարդենիսի համայնքապետարան	200,000
9	**«Հույի Կամուրջ» ՀԿ** – Դիլիջանի համայնքապետարան	1,230,000
10	**«Հույի Կամուրջ» ՀԿ** - Իջևանի համայնքապետարան	0
11	**Հայաստանի համայնքների միություն** - Իջևանի համայնքապետարան	260,000
12	**Իջևանի համայնքների միություն -** Իջևանի համայնքապետարան	410,000
13	**«Տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ -** Իջևանի համայնքապետարան	200,000
14	**«Լիարժեք Կյանք» ՀԿ –** Տաշիրի համայնքապետարան	50,000
15	**«Փոքրիկ Իշխան» սոցիալական կենտրոն -** Տաշիրի համայնքապետարան	40,000
16	**«Տիրամայր Հայաստանի Դաստիարակությյան Կենտրն» Հիմմնադրամ -** Տաշիրի համայնքապետարան	40,000
17	**«Լիարժեք Կյանք» ՀԿ -** Ստեփանավանի համայնքապետարան	0
	- Գեղարքունիքի մարզպետարան	0
	- Ճամբարակի համայնքապետարան	0

Վերոնշյալ աղյուսակներից պարզ է դառնում, որ առավել շատ կազմակերպություններ ֆինանսավորում են ստացել Լոռու մարզպետարանի կողմից:

Հատկացրած ֆինանսավորման ծավալով առաջատար է Տավուշի մարզպետարանը, իսկ համայնքներից առաջատար է Դիլիջանի համայնքապետարանը:

Ընդհանուր առմամբ, 2018թ. ընթացքում թվով 3 (երեք) մարզպետարանների և թվով 6 (վեց) համայնքապետարանների կողմից հատկացվել է մոտ **9,711,900** դրամի ֆինանսավորում թվով **17** կազմակերպություններին:

2. ՔՀԿ-ների ֆինանսավորումը պետական կառույցների (մարզպետարանների և համայնքապետարանների) բյուջեների ֆինանսավորման հոդվածներով

Մարզպետարանների և համայնքների բյուջեներից ՔՀԿ-ներն ֆինանսավորում ստանում են համայնքի վարչական բյուջեի «Դրամաշնորհներ» տողով (4500), մեկ այլ դեպքում՝ «Այլ ծախսեր» բաժնի «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» ենթատողով (4712, 4819) և մեկ ուրիշ դեպքում ՔՀԿ-ները ֆինանսավորում ստանում են սուբսիդիա:

«Հույսի Կամուրջ» ՀԿ-ն Դիլիջանի, Իջևանի, Բերդի և Նոյեմբերյանի համայնքապետարաններից ֆինանսական և ոչ ֆինանսական միջոցներ է ստացել, և Կազմակերպության ու համայնքապետարանի միջև կնքվել է կամ պայմանագիր կամ պարզապես համայնքի ավագանու որոշում է կայացվել:

3. ՔՀԿ-ներին պետական ֆինանսական աջակցության տրամադրման ընթացակարգը

Յուրաքանչյուր մարզպետարանի և համայնքապետարանի դեպքում ինչպես ՔՀԿ-ներին ֆինանսական միջոցների հատկացման գործընթացը կարգավորող փաստաթուղթը, այնպես էլ ողջ գործընթացը տարբեր է:

Ինչպես ցույց տվեցին հետազոտության ընթացքում ուսումնասիրված փաստաթղթերը ՔՀԿ-ներին մարզպետարանի և համայնքապետարանի կողմից ֆինանսական միջոցների հատկացումը կարգավորվում է.

- Մարզպետի և/կամ քաղաքապետի հրամանով
- Ավագանու որոշմամբ (Վարդենիս համայնք)
- Մարզպետարանի և/կամ քաղաքապետարանի քաղաքականությամբ

ՔՀԿ-ներին ֆինանսական միջոցների նպատակները սահմանվում են հետևյալ երկու տարբերակով՝ մարզպետարանի և/կամ համայնքապետարանի քաղաքականության համապատասխան, կամ ըստ ՔՀԿ-ի առաջարկության:

ՔՀԿ-ներին մարզպետարանների և համայնքապետարանների ֆինանսական միջոցների տրամադրման ընթացակարգերը տարբեր են: Կարելի է խմբավորել ընթացակարգերի հետևյալ տիպերը:

3.1 Մշակված և գործող ընթացակարգեր

Կան մարզպետարաններ և համայնքապետարաններ, որոնք մշակել են ՔՀԿ-ների ֆինանսական միջոցների տրամադրման հստակ ընթացակարգեր: Դրա տիպիկ օրինակ է Վարդենիս համայնքը:

3.2 Նպատակային հատկացում

Մարզպետարանները և համայնքապետարանները ՔՀԿ-ներին ֆինանսական միջոցներ են տրամադրում առավելապես ուղղակի հատկացման միջոցով, մասնավորապես հաշմանդամություն ունեցող երեխաների համար ցերեկային խնամքի կենտրոնի տարածքի մասնակի վերանորոգման նպատակով:

Տավուշի մարզպետարանը սուբսիդիա է տրամադրում, նվիրաբերության պայմանագիր է կնքում, կա նաև դրամաշնորհի պայմանագրով կատարվող հատկացումներ:

4. Ֆինանսական միջոցների վերահսկում և կատարողականի մշտադիտարկում

Մարզպետարանների և համայնքապետարանների կողմից ՔՀԿ-ներին հատկացվող ֆինանսական միջոցների վերահսկումը իրականացվում է ինչպես ֆինանսական հաշվետվությունների միջոցով, այնպես էլ ժամանակ առ ժամանակ համապատասխան կառույցների ներկայացուցիչների կողմից մոնիթորինգային այցերի միջոցով:

Կատարողականությունը և արդյունավետությունը վերահսկվում/գնահատվում են. ամեն միջոցառման ժամանակ լինում են ներկայացուցիչներ համապատասխան կառույցներից:

ՔՀԿ ներկայացուցիչ

Հետազոտությանը մասնակից ՔՀԿ ներկայացուցիչների մի մասի կարծիքով ֆինանսական միջոցների վերահսկումը այնքան էլ պարտադիր և անհրաժեշտ գործընթաց չէ:

Եթե նվիրաբերություն է, էլ ինչ վերահսկեն:

ՔՀԿ ներկայացուցիչ

Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ ՔՀԿ-համայնք համագործակցության գործող մոդելներում ի թիվս այլ խնդիրների՝ բացակայում է մշտադիտարկման համակարգը:

Ծրագրի ավարտից հետո ներկայացվում է ֆինանսական հաշվետվություն: Կատարողականի վերահսկումը հիմնականում արվում է բանավոր, հեռախոսով: Վերահսկումն ըստ պայմանագրի նրանք կարող են անել ցանկացած պահի, սակայն հիմնականում բանավոր են կատարում:

ՔՀԿ ներկայացուցիչ

Մարզպետարանի կամ քաղաքապետարանի կողմից ՔՀԿ-ներին ֆինանսական միջոցների հատկացման և վերահսկման գործընթացը առավել արդյունավետ դարձնելու համար լավ կլիներ, եթե համայնքում առկա են համապատասխան որակավորում ունեցող կազմակերպություններ, ապա համայանքապետարանի կողմից հայտարարվեն բաց մրցույթներ, ինչը հնարավորություն կտա բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությանը:

ՔՀԿ ներկայացուցիչ

5. Մարզպետարանների և համայնքապետարանների բյուջեներից (ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ) ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ հոդվածի 4264 տողից ծախսվող ֆինանսական միջոցների ծավալը

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին թվով 3 (երեք) մարզպետարանների և թվով 6 (վեց) համայնքապետարանների ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ հոդվածի ծախսերը, ֆինանսական միջոցների ծավալները ներկայացված են Աղյուսակ 3-ում և 3.1-ում:

Աղյուսակ 3. ՏՈՂ 4264 Դիտարկված մարզպետարանների տրանսպորտային նյութեր հոդվածի ծախսերը, ֆինանսական միջոցների ծավալները

	Մարզպետարան	**Հազար դրամ**
1	Լոռի	9,728,000
2	Տավուշ	8,201,700
3	Գեղարքունիք	7,809,000
	Ընդհամենը	**25,738,700**

Աղյուսակ 3,1. ՏՈՂ 4264 Դիտարկված համայնքապետարանների տրանսպորտային նյութեր հոդվածի ծախսերը, ֆինանսական միջոցների ծավալները

	Համայնքապետարան	**Հազար դրամ**
1	Տաշիր	12,000,000
2	Ստեփանավան	8,360,000
3	Դիլիջան	17,655,000
4	Իջևան	3,143,000
5	Ճամբարակ	5,330,000
6	Վարդենիս	2,361,000
	Ընդհամենը	**48,849,000**

6. Համայնքապետարանների բյուջեներից (ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ) ԱՅԼ ԾԱԽՍԵՐ հոդվածի 4700 տողից ծախսվող ֆինանսական միջոցների ծավալը

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին թվով 6 (վեց) համայնքապետարանների ԱՅԼ ԾԱԽՍԵՐ հոդվածի ծախսերը, ֆինանսական միջոցների ծավալները ներկայացված են Աղյուսակ 4-ում:

ԱՅԼ ԾԱԽՍԵՐԸ ներառում են այդ թվում՝ նվիրատվություններ ոչ կառավարական (հասարակական) կազմակերպություններին, տնային տնտեսություններին ծառայություններ մատուցող՝ շահույթ չհետապնդող կազմակերպություններին նվիրատվություններ և նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին:

Աղյուսակ 4. ՏՈՂ 4700 Դիտարկված համայնքապետարանների այլ ծախսեր հոդվածի ծախսերը, ֆինանսական միջոցների ծավալները

	Համայնքապետարան	**Հազար դրամ**
1	Տաշիր	11,425,000
2	Ստեփանավան	812,000
3	Դիլիջան	20,500,000
4	Իջևան	1,900,000
5	Ճամբարակ	69,313,100
6	Վարդենիս	26,068,500
	Ընդհամենը	**130,018,600**

7. Մարզպետարանների և համայնքապետարանների բյուջեներից (ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ) ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ բաժնի, ԱՅԼ ՆՊԱՍՏՆԵՐ ԲՅՈՒՋԵԻՑ հոդվածի, 3000, 3041, 4729 տողերից ծախսվող ֆինանսական միջոցների ծավալը

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին թվով 3 (երեք) մարզպետարանների և թվով 6 (վեց) համայնքապետարանների ԱՅԼ ՆՊԱՍՏՆԵՐ ԲՅՈՒՋԵԻՑ հոդվածի ծախսերը, ֆինանսական միջոցների ծավալները ներկայացված են Աղյուսակ 5-ում և 5,1-ում:

Աղյուսակ 5. ՏՈՂ 3000, 3041, 4729 Դիտարկված մարզպետարանների այլ նպաստներ բյուջեից հոդվածի ծախսերը, ֆինանսական միջոցների ծավալները

	Մարզպետարան	**Հազար դրամ**
1	Լոռի	30,000,000
2	Տավուշ	76,615,000
3	Գեղարքունիք	30,000,000
	Ընդհամենը	**136,615,000**

ՀՀ Լոռու մարզպետարանի բյուջեից 2018 թվականին 30,000,000 դրամ ֆինանսական աջակցություն է տրամադրվել կազմակերպություններին և քաղաքացիներին (կազմակերպություններին կամ զին.ընտանիքներին՝ 1,984,000 դրամ, քաղաքացիներին՝ 28,046,000 դրամ): Այդ թվում՝

- Բանակի օրվա կապակցությամբ վիրավոր և զոհված զինծառայողների ընտանիքներին հատկացվել է 200,000 դրամ ֆինանսական աջակցություն (2 վիրավոր զին.ծառայողների ընտանիքներին 60,000-ական դրամ և 2 զոհված զինծառայողների ընտանիքներին՝ 40,000-ական դրամ):
- 2016 թվականի ապրիլյան պատերազմում զոհված և վիրավոր ազատամարտիկների ընտանիքներին հատկացվել է 630,000 դրամ ֆինանսական աջակցություն (6 զոհված զինծառայողների ընտանիքներին հատկացվել է 50,000-ական դրամ և 11 վիրավոր զին.ծառայողների ընտանիքներին՝ 30,000-ականա դրամ):

- Զոհված ազատամարտիկների ընտանիքներին դեկտեմբերին հատկացվել է 300,000 դրամ ֆինանսական աջակցություն (6 ընտանիքների 50,000-ական դրամ)։
- Թվով 3 բազմազավակ ընտանիքների դեկտեմբերին հատկացվել է 150,000 դրամ (50,000-ական) ֆինանսական աջակցություն։
- ՀՀ Լոռու մարզպետին գրավոր դիմած 1351 քաղաքացիներին հատկացվել է 28,046,000 դրամ ֆինանսական աջակցություն.
  - առողջական (բուժման, հետազոտության, դեղորայքի ձեռքբերման, տրանսպորտային ծախսերի փոխհատուցման և այլն նպատակով)
  - սոցիալական (ցածր կենցաղավարության, սոցիալական անապահովության, ընտանիքի ֆինանսական դժվարությունների, ունեցած պարտքերի և այլն նպատակով)
  - կոմունալ-կենցաղային ծախսերի, և բնակարանային (վարձակալության, տնակի կամ կացարանի վերանորոգման ծախսերի փոխհատուցման և այլն նպատակով)։
- ՔՀԿ-ների հատկացվել է 624,000 դրամ։
- «Վանաձորի մանկատուն» ՊՈԱԿ-ին հատկացվել է 50,000 դրամ՝ միջոցառման կազմակերպման համար։

ՀՀ Տավուշի մարզպետարանի բյուջեից 2018 թվականին 76,615,000 դրամ ֆինանսական աջակցություն է տրամադրվել թվով 62 բնակավայրերի 1636 ընտանիքների։ Այդ դրամական օգնությունները քաղաքացիներին հատկացվել է առողջական խնդիրների (վիրահատություններ, դեղորայքի ձեռքբերում և այլն), անաշխատունակության, ծերության, հարազատին կորցնելու, գործազրկության, բազմազավակ ընտանիք լինեու և այլ դեպքերում, ինչպես նաև արտակարգ իրավիճակների դեպքում՝ գնդակոծություններ, ականների պայթյունների հետևանքների վերացում, բնակարանների կամ այգիների ու ցանքատարածքների հրդեհներ, կարկտահարություն և այլն։ Հարկ է նշել, որ 2018թվականին Տավուշի մարզպետի կողմից կայացվել է թվով 22 որոշումներ՝ «Դրամական օգնություն տրամադրելու մասին»։ Դրամական օգնության հատկացման նպատակը որոշմամբ չի արտացոլվում, միաժամանակ մարզպետարանը հաշվառում չի իրականացնում տարվա կտրվածքով, որպեսզի դասակարգված ընդհանուր թվեր տրամադրի շահագրգիռ կառույցների։

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի բյուջեից 2018 թվականին ավելի քան կարիքավոր 884 ընտանիքներ ստացել են սոցիալական աջակցություն, սոցիալապես անապահով շահառուների տրամադրվել է միանվագ դրամական օգնություն, և այդ միջոցների հատկացումները կատարվել է ՀՀ Գեղարքունիքի մարզպետի որոշմամբ, մարզպետի կողմից կատարված քաղաքացիների ընդունելության ժամանակ, քաղաքացիների դիմումների ուսումնասիրության արդյունքում, համայնքի ղեկավարների գրության, մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների կողմից կատարված դիմումների ուսումնասիրության արդյունքում գրված զեկուցագրերի և տնային այցելությունների հիման վրա:

Աղյուսակ 5,1. **ՏՈՂ 3000, 3041, 4729** Դիտարկված համայնքապետարանների այլ նպաստներ բյուջեից հոդվածի ծախսերը, ֆինանսական միջոցների ծավալները

	Համայնքապետարան	**Հազար դրամ**
1	Տաշիր	1,800,000
2	Ստեփանավան	1,550,000
3	Դիլիջան	4,000,000
4	Իջևան	780,000
5	Ճամբարակ	6,000,000
6	Վարդենիս	600,000
	Ընդհամենը	**14,730,000**

Եզրակացություններ

Հետազոտության արդյունքները թույլ են տալիս կատարելու հետևյալ հիմնական եզրակացությունները՝

1. Ընդհանուր առմամբ, 2018թ. մարզպետարանների և քաղաքապետարանների կողմից ՔՀԿ հատվածին տրամադրվել է մոտ **9, 711, 900** դրամ՝ **17** կազմակերպությունների: ՔՀԿ դաշտի ֆինանսավորման ծավալներով առաջատար դիրքում են գտնվում դիտարկված մարզպետարաններից Տավուշի մարզպետարանը, իսկ դիտարկված համայնքապետարաններից Դիլիջանի և Իջևանի համայնքապետարանները: Առավել շատ կազմակերպություններ ֆինանսավորում են ստացել Լոռու մարզպետարանի կողմից։
2. Դեռևս ձևավորված չէ ՔՀԿ-ներին հանրային (պետական և համայնքային) ֆինանսական միջոցների հատկացման միասնական մեխանիզմ: Մարզպետարանների և համայնքապետարանների մեծամասնությունը չունեն ՔՀԿ-ների ֆինանսավորման ներքին հստակ քաղաքականություն:
3. ՔՀԿ-ներին մարզպետարանների և համայնքապետարանների ֆինանսական միջոցների հատկացման երեք հիմնական մեխանիզմ է գործում՝ դրամաշնորհների տրամադրում, սուբսիդիա և նվիրաբերություն:
4. ՔՀԿ-ներին ֆինանսական միջոցների վերահսկումը մարզպետարանների և համայնքապետարանների կողմից գրեթե չի կատարվում: ՔՀԿ-ների մարզպետարանների և համայնքապետարանների միջոցներով ֆինանսավորված ծրագրերի կատարողականի մշտադիտարկման արդյունքների գնահատման միասնական մոտեցում չի գործում: Շատ դեպքերում մշտադիտարկում և գնահատում առհասարակ չի իրականացվում և վերջնական հաշվետվություն ներկայացնեու պահանջ չի դրվում:
5. Մարզպետարանների և համայնքապետարանների բյուջեների ԱՅԼ ԾԱԽՍԵՐ, ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ և ԱՅԼ ՆՊԱՍՏՆԵՐ ԲՅՈՒՋԵԻՑ հոդվածների համապատասխան տողերից ֆինանսական միջոցների ծախսերի թվերից կարելի է եզրակացնել, որ որևէ մարզպետարան կամ ՏԻՄ չունեն հաշմանդամություն ունեցող երեխաներին ծառայություններ մատուցող ՀԿ-ների աջակցության համար հատկացված ֆինանսական միջոցներ։
6. Անհրաժեշտ է մարզպետարանների և ՏԻՄ մարմինների համար լսելի դարձնել հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների ձայնը և ապահովել պատշաճ ծառայություններ համայնքներում, ներգրավելով ոլորտային ՔՀԿ-ներ և շահագրգիռ այլ կողմեր։

Առաջարկություններ

Հետազոտության եզրակացություններից են բխում ՔՀԿ-ներին մարզպետարանների և համայնքապետարանների կողմից ֆինանսավորման վերաբերյալ հետևյալ առաջարկությունները։

1. **Ֆինանսավորման մրցակցության և թափանցիկության ապահովում**

Մարզպետարանների և համայնքապետարանների կողմից ՔՀԿ-ների ֆինանսավորման մրցակցությունը և հրապարակայնությունը հնարավորություն կտա ՔՀԿ-ներին ավելի ակտիվ մասնակցել համայնքի կյանքին և տեղական ֆինանսավորում ստանալ իրենց ծրագրերի համար, իսկ ՏԻՄ մարմիններին՝ ապահովել ֆինանսավորվող ծրագրերի ավելի բարձր որակ և հասարակության կողմից իրազեկման ավելացում: Ֆինանսավորման թափանցիկ ընթացակարգերը և գործընթացները թույլ կտան վստահություն ձեռք բերել ֆինանսավորման անկողմնակալության և արդարության վերաբերյալ՝ ներգրավելով ավելի շատ ՔՀԿ-ներ և ավելի արդյունավետ կերպով իրականացնելով հանրային մոնիթորինգային քաղաքականությունը:

2. **Ֆինանսավորման հստակեցում**
3. **Աջակցության մեխանիզմների կատարելագործում**
4. **Ֆինանսավորման ավելացում**

Մարզպետարանների և քաղաքապետարանների կողմից ՔՀԿ ֆինանսավորման մեխանիզմների հստակեցման, մրցակցության և թափանցիկության, ինչպես նաև վերահսկման մեխանիզմների կատարելագործման դեպքում ողջունելի կլինի ավելացնել մարզպետարանների և քաղաքապետարանների կողմից ՔՀԿ ֆինանսավորման ծավալը՝ ընդգրկելով ավելի շատ ծրագրեր և ՔՀԿ-ներ:

5. **Վերահսկման և գնահատման մեխանիզմների կատարելագործում**

Ինչպես ցույց տվեց հետազոտությունը, մարզպետարանների և քաղաքապետարանների կողմից ֆինանսավորում ստացած ՔՀԿ-ների վերահսկման և գնահատման համակարգը դեռևս կայացած չէ: Նման համակարգի ստեղծումը կամ կատարելագործումը կօգնի թե՛ իրականացվող ծրագրերի որակի բարձրացմանը, թե՛ հետագա ծրագրերի ընտրության ժամանակ որոշումների ընդունմանը և թե, վերջապես, պետական ֆինանսավորման ինստիտուտի հանդեպ հասարակության վստահության բարձրացմանը:

Հավելված 1

ՀԱՐՑԱՇԱՐ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Երբվանից և ինչպես եք համագործակցում …. Մարզպետարանի կամ քաղաքապետարանի հետ:
2. Որքան գումար է հատկացվել … Մարզպետարանի կամ քաղաքապետարանի կողմից ձեր կազմակերպությանը 2018թ.:
3. Ինչ ընթացակարգով են տրամադրվել դրամական միջոցները ձեր ՔՀԿ-ին … Մարզպետարանի կամ քաղաքապետարանի կողմից:
4. *(եթե մրցույթային կարգով է)* Ինչպես եք տեղեկացել մրցույթ/դրամաշնորհի մասին:
5. Ինչպես և ում կողմից է վերահսկվում/գնահատվում տրամադրված դրամաշնորհների կատարողականությունը և արդյունավետությունը (հաշվետվություն, պարբերականություն):
6. Արդյոք հասել են ծրագրով նախատեսված նպատակ(ներ)ին և արդյուքներին:
7. Ինչ կառաջարկեք ն Մարզպետարանի կամ քաղաքապետարանի կողմից ՔՀԿ-ներին ֆինանսական միջոցների հատկացման և վերահսկման գործընթացը առավել արդյունավետ դարձնելու համար:

ՀԱՐՑԱՇԱՐ

ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Մարզպետարանը ունի արդյոք ռազմավարություն, ծրագրերում քաղաքացիական հասարակության կառույցների (ՔՀԿ) ներգրավման վերաբերյալ և եթե այո, ապա ինչպես է դա արտացոլվում (կարգավորվում) մարզպետարանի կողմից իրականացվող ծրագրերում (կանոնադրություն, մարզպետի հրաման, մարզպետի որոշում և այլն):
2. Ինչպես է հաշվարկվում ձեր մարզպետարանի կողմից ՔՀԿ-ների համար նախատեսված բյուջետային հայտը՝ յուրաքանչյուր տարվա համար:
3. Ինչպես է որոշվում ՔՀԿ-ներին ձեր մարզպետարանի կողմից տրամադրվող միջոցների նպատակայնությունը:
4. Ինչ ընթացակարգով է տրամադրվում գումարը ՔՀԿ-ներին (բաց մրցույթ, փակ մրցույթ, ուղղակի հատկացում և այլն) և ինչ տեսքով (դրամաշնորհ, ծառայության մատուցման պայմանագիր և այլն):
5. Եթե մրցութային կարգով է տրամադրվում, ապա ինչպես և որտեղ է հայտարարվում մրցույթը (կայք, թերթ և այլն):
6. Ինչպես է իրականացվում ՔՀԿ հայտերի ընտրության գործընթացը:
7. Որո՞նք են ՔՀԿ-ների ընտրության չափանիշները:
8. Ինչպես և ում կողմից է վերահսկվում և/կամ գնահատվում տրամադրված դրամաշնորհների կատարողականությունը և արդյունավետությունը (հաշվետվություն, պարբերականություն):
9. Ինչպես է իրազեկվում հանրությունը մարզպետարանի կողմից ՔՀԿ-ներին տրամադրված միջոցների մասին:
10. Ինչ կառաջարկեք մմարզպետարանների կողմից ՔՀԿ-ներին ֆինանսական միջոցների հատկացման և վերահսկման գործընթացը առավել արդյունավետ և թափանցիկ դարձնելու համար: